**Արձանագրություն N 2**

**«ԱՐՄ-ԱԷՐՈ-ԳՀԱՊՁԲ-17/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի**

**ք. Երևան, Արշակունյաց 135** — **«26» «06» 2017թ ժ.14:00**

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Լ. Կարապետյան (ԳԱՊ)
Հանձնաժողովի անդամներ՝ Է. Հարությունյան (գնահատող) Ս. Գրիգորյան (գնահատող), Ա.Շադյան, (բացող) Ն.Սաֆարյան (բացող)
Հանձնաժողովի քարտուղար՝ Նաիրա Մկրտչյանը

## 1. Տեղեկություններ «ԱՐՄ-ԱԷՐՈ-ԳՀԱՊՁԲ-17/1» ծածկագրով գնանշման հարցման հայտեր ներկայացրած մասնակիցներ մասին

(Լ.կարապետյան)

Ընդունել ի գիտություն, որ հայտերը բացվել են www.armeps.am կայքի միջոցով՝ հրավերը հրապարակելու օրվան հաջորդող 7-րդ օրը, ժամը 14:00-ին, որը համընկել է հայտերը ներկայացնելու վերջնաժամկետին:

| | | | |
|---|---|---|---|
| 1 | «Մաքսհուր» ՍՊԸ | - | ք. Երևան, Տպագրիչների 8, ՀՎՀՀ 02571605, էլ. հասցե՝ maxhur.tender@mail.ru |
| 2 | «ՖԼԵՇ» ՍՊԸ | - | ք. Երևան,Ե.Կողբացու 30, ՀՎՀՀ 01808789, էլ. հասցե՝flashltdtender@gmail.com, |

**Որոշում թիվ 1.**

Հրավերով սահմանված՝մասնակիցների կողմից ներկայացված փաստաթղթերը ներկայացված են սահմանված պահանջներին համապատասխան:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ 0:

## 2. Մասնակիցների կողմից ներկայացված գնային առաջարկների մասին

2.1 Մասնակիցների կողմից ներկայացված գնային առաջարկները ներկայացված են ստորև բերված աղյուսակում.

ՀՀ դրամ

| | Մասնակից | Նախահաշվային գին | <<Մաքսհուր>> ՍՊԸ | | | <<Ֆլեշ>> ՍՊԸ | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| N | Ապրանքի անվանումը | | արժեք | ԱԱՀ | Ընդհանուր | արժեք | ԱԱՀ | Ընդհանուր |
| *1* | | | | | | | | |
| 1 | **Ավիացիոն կերոսին** | **13800000** | 11450000 | 2290000 | 13740000 | 12000000 | 2400000 | 14400000 |

2.2 Մասնակիցների կողմից ներկայացված գնային առաջարկներում չկան թվաբանական անճշտություններ

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ 0:

## 3. Տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության և սահմանված պահանջներին դրանց համապատասխանության մասին

(Լ.Կարապետյան)

3.1 Մասնակիցների կողմից ներկայացված էլեկտրոնային հայտում առկա են հրավերով պահանջվող բոլոր փաստաթղթերը և համապատասխանում են հրավերով սահմանված պահանջներին համապատասխան:
3.2 <<Ֆլեշ>> ՍՊԸ-ի կողմից ներկայացված գնային առաջարկը գերազանցում է ավիավառելանյութի համար հատկացված ֆինանսական միջոցները (գնային առաջարկը գերազանցում է նախահաշվային գինը)

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ 0:

## 4. Տեղեկություն «ԱՐՄ-ԱԷՐՈ-ԳՀԱՊՁԲ-17/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի առաջին տեղ զբաղեցնող մասնակիցների մասին

(Լ.Կարապետյան)

4.1 Քանի որ <<Ֆլեշ>> ՍՊԸ-ի կողմից ներկայացված գնային առաջարկը գերազանցում է ավիավառելանյութի համար հատկացված ֆինանսական միջոցները, հանձնաժողովը որոշեց ԱՐՄ-ԱԷՐՈ-ԳՀԱՊՁԲ-17/» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի 1-ին տեղ զբաղեցնող մասնակից ճանաչել <<Մաքսհուր>> ՍՊԸ- ին, որպես բավարար գնահատված նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակից:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ 0:

5. Հայաստանի Հանրապետության ԿԱ ՊԵԿ հարցում ներկայացնելու և 1-ին տեղ զբաղեցրած մասնակցին ծանուցելու մասին

(Լ.Կարապետյան)

5.1 Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետը հանձնաժողովը որոշեց՝

1) Հայաստանի Հանրապետության ԿԱ ՊԵԿ ներկայացնել հարցում՝ առաջին տեղ զբաղեցրած մասնակից <<Ֆինանսական չափորոշիչներ>> որակավորման չափանիշներին վերեբերող հրավերով նախատեսված որակավորման պահանջի առկայության վերեբերյալ

2) առաջին տեղը զբաղեցրած մասնակցին առաջարկել երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել հրավերով սահմանված որակավորման չափանիշները հիմնավորող ՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, առաջարկվող ապրանքի անվանումը և տեխնիկական բնութագիրը:

Հրավերեվ սահմանված ժամկետում փաստաթղթերը չներկայացնելու դեպքում հանձանժողովի կողմից կմերժվի առաջին տեղ զբաղեցրած մասնակցի հայտը:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ 0:

2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

(Լ.կարապետյան)

Հանձնաժողովը որոշեց «ԱՐՄ-ԱԷՐՈ-ԳՀԱՊՁԲ-17/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի փաստաթղթերի գնահատման արդյունքների հաստատման նիստը հրավիրել ոչ ուշ, քան առաջին տեղը զբաղեցրած մասնակցի որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, առաջարկվող ապրանքի անվանումը և տեխնիկական բնութագիրը հանձնաժողովի անդամներին տրամադրվելուն հաջորդող աշխատանքային օրը ժամը 14:30-ին, ք. Երևան, Արշակունյաց 135 հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ 0:

| Հանձնաժողովի | | |
|---|---|---|
| Նախագահ՝ | [signature] | Լևոն Կարապետյան |
| Անդամներ՝ | [signature] | Անի Շաղյան |
| | [signature] | Նորայր Սաֆարյան |
| | [signature] | Սպարտակ Գրիգորյան |
| | [signature] | Էդվարդ Հարությունյան |
| Քարտուղար՝ | [signature] | Նաիրա Մկրտչյան |